ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 854-Ա « 16 » փետրվարի 2026թ.

Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ Հ.217 ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի գրությունը՝ Մ.Խորենացու փողոցի հ.217 վարչական շենք հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասի (ծածկագիր՝ 01-005-0099-0103) սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02092025-01-0132 վկայականը, ՀՀ կադաստրի կեմիտեի ԱՏ-17102025-01-1048 և ԱՏ-25112025-01-0759 տեղեկանքները, «Տավուշ հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հատակագիծը և 29.09.2025թ. եզրակացությունը, ինչպես նաև Մ.Խորենացու փողոցի հ.217/19 հասցեում գտնվող հողամասի սեփականատիրոջ՝ Արտեմ Սահակյանի 12.01.2026թ. համաձայնությունը:

Քննարկվող հողամասը, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն, գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գոտում և այն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 8-րդ գոտում:

Ճշգրտված տեղագրական հանույթի ուսումնասիրությունից պարզվել է, որ Մ.Խորենացու փողոցի հ.217 վարչական շենք հասցեի հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.26357 հա, վկայականում ամրագրված՝ 0.2535 հա-ի փոխարեն, հողամասի մակերեսների տարբերությունը նախկինում երկրաչափորեն և ներկայումս էլեկտրոնային տարբերակներով իրականացված հաշվարկների արդյունք է /տեխնիկական վրիպակ/ և ավել տնօրինվող հողամասը ևս հանդիսանում է պետական սեփականություն:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 20.01.2026թ. հ.Դ-1333-26 եզրակացությունը և 13.02.2026թ հ.Ն/8090-26 գրությունը.

1.Սահմանել, Մ.Խորենացու փողոցի հ.217 վարչական շենք հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.26357 հա, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմների 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Մ.Խորենացու փողոցի հ.217 վարչական շենք հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը /կատեգորիան/ սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ հասարակական կառուցապատման:

3. Ընդունել ի գիտություն, որ քննարկվող հողամասով անցնում է «Վեոլա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող և շահագործվող d=300մմ կոյուղագիծ, ինչպես նաև ցածր ճնշման d-57մմ վերգետնյա գազատար խողովակ:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

5. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

7. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ